ՌՈԲԵՐՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Հայոց ցեղասպանության թանգարան ինստիտուտ, ԵՊՀ

1915 Թ. ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՏԵՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Ուշադրությունը քննության առարկան Հայոց ցեղասպանության համապատկերում Սեբաստիայի վիլայեթի՝ հայ բնակչության տեղահանությունների վերլուծությունն է տեսական աշխատությունների հիման վրա՝ զուգահեռներ տանելով տեղահանության ընթացքում իրագործված հանցագործությունների այլ օրինակների հետ։

Հայոց ցեղասպանության պարագայում դեռևս նախացեղասպանական փուլում օսմանյան՝ իրար հաջորդող իշխանությունների կողմից իրագործվել է հայկական տարածքների դատարկման լայնածավալ եւ հստակ ծրագիր՝ իրավունքների անհավասարություն, տարերային եւ ուղղորդված կոտորածներ, ինչպես նաեւ մուսուլմանների (գաղթականներ Բալկաններից եւ Կովկասից) վերաբնակեցման ընդգծված քաղաքականություն, ինչը հանգեցրեց Արեւմտյան Հայաստանից հայերի արտագաղթին։ Մյուս եղանակը լայնածավալ բռնություններն էին, որի ականատու դրսեւորումներից էին 1894–1896 թթ. տեղի ունեցած Համիդյան կոտորածները։ Իշխանությունները քրդերին պարտադրել են նստակյաց կյանք, իսկ Համիդյան ջարդերի ժամանակ քրդերի կողմից յուրացվել են հայկական հողերն ու հայերի սեփականությունը։ Համիդյան ջարդերին հաջորդող խոշոր կոտորածն արդեն փոփոխված քաղաքական իշխանությունների՝ Երիտթուրքական կուսակցության կողմից իրականացված Ադանայի կոտորածներն էին, որոնց զոհ գնաց շուրջ 30 000 մարդ[1]։

Հայերի դեմ իրականացվող այս քաղաքականությունը շարունակվեց՝ 1913 թ. արդեն ձեւակերպվելով որպես «Անատոլիան թուրքացնելու» եւ այդպիսով Հայկական հարցին «վերջնական լուծում» տալու գաղափար[2]։

---

[1] R. Adalian, Atrocities, Massacres and War Crimes: An Encyclopedia, (ed/ Mikaberidze, Alexander), *հտ. 1,* Santa Barbara, California, Denver, Colorado, Oxford England, 2013, *էջ 2։*

[2] Ռ. Սաֆրաստյան, *Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ., Իրան-Նամե, «Արեւելագիտական հանդես», թ. 4–5-7, 1997, էջ 7։*

1915–1917 թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված, որպես վերաբնակեցման ծրագիր ներկայացվող տեղահանություններն իրականում մեթոդական կերպով կազմակերպված եւ համակարգված գործողություններ էին՝ բացահայտ ցեղասպանական բնույթ կրող: Դրանց հետեւանքով հայ բնակչությունը հեռացվեց իր բնակության տարածքներից եւ ոչնչացվեց, ինչը նաեւ հնարավորություն ընձեռեց երիտթուրքական կուսակցությանը բռնագրավելու հայերի շարժական եւ անշարժ գույքը:

Բռնագաղթի երթուղիների մեթոդաբանությունը վերլուծելու համար քննության կառնվեն պատմության մեջ հայտնի այլ օրինակները եւ դրանց հիմնական բնորոշիչները: Նոր շրջանում տեղահանությունների վաղ դրսեւորումներ արձանագրվել են 19-րդ դարում Ամերիկայում[3], հաջորդող հարյուրամյակի ընթացքում՝ Աֆրիկայում[4], Փոքր Ասիայում[5], Եւրոպայում[6], Հեռավոր Արեւելքում[7]՝ դառնալով ավելի հաճախակի, որոշ դեպքերում էթնիկ զտումներից վերածվելով ցեղասպանական գործողությունների: Տեսական սահմանումների, տիպաբանության եւ հիմնական բնորոշիչների համար հիմք է ծառայել էնդրյու Բասսոյի «Տեղահանության հանցագործությունների տեսության շուրջ. Չերոքիների «Արցունքների արահետը», Հերերոների ցեղասպանությունը, Պոնտոսի հույների ցեղասպանությունը» (Towards a Theory of Displacement Atrocities: The Cherokee Trail of Tears, The Herero Genocide, and The Pontic Greek Genocide[8]) հոդվածը: Բռնի տեղահանություններն ուսումնասիրելու համար կներկայացվեն դրանց սահմանումը, գործադրման ձեւերը, տվյալ գործընթացների նպատակները, գործառական կողմերը, խմբի ոչնչացման եղանակները, տեղահանման տարածքի ընտրության հարցը: Սեբաստիայի տեղահանության ներկայացման համար, ելնելով որոշ բաղադրիչների նմանությունից, փորձ կկատարվի նաեւ որոշակի զուգահեռներ անցկացնել հետեւյալ

[3] *«Արցունքների արահետ» անվանումն է ստացել 1938 թվականի Չերոքրիների մահվան քայլերթը:*

[4] E. Weisband, C.I.P. Thomas, Political Culture and the Making of Modern Nation-States, New York, *2016, էջ 16:*

[5] R. Kévorkian, The Armenian Genocide. A Complete history. London, New York, 2011, p. 289–625*:*

[6] D. Blatman, The Death Marches. The Final Phase of Nazi Genocide, Cambridge, Massachusetts, London, England, 2011.

[7] R. Greenberger, The Bataan Death March: World War II Prisoners in the Pacific, Mankato, MN, 2009.

[8] A. Basso, Towards a Theory of Displacement Atrocities: The Cherokee Trail of Tears, The Herero Genocide, and The Pontic Greek Genocide, Genocide Studies and Prevention, An International Journal: Vol. 1, p. 5–29.

իրադարձությունների հետ՝ «Արցունքների արահետ» (ԱՄՆ, 1838)[9], հերերոների եւ հոտենտոտների տեղահանություններ (Գերմանական Հարավարեւմտյան Աֆրիկա, 1904–1907)[10], Հոլոքոստ (Ֆաշիստական Գերմանիա, 1939–1945), Բատաանի «մահվան երթերը» (Ֆիլիպիններ, 1942 թ.)[11]։ Հետազոտության մեջ կօգտագործվեն տվյալ թեմային առնչվող սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները։

Բռնի տեղահանությունը բնորոշվում է որպես մարդկանց խմբերի բռնի տեղահանում պետության հարկադրական համակարգի ուղղակի կիրառմամբ՝ ի դեմս ոստիկանության, բանակի եւ այլ կառույցների։ Այն ենթադրում է տվյալ երկրի փաստացի իշխանությունների կողմից որոշակի մարդկային խմբերի հավաքագրում, մեկտեղում՝ պայմանավորված նրանց էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային կամ այլ հատկանիշներով։ Տվյալ խմբի ընտրությունը կարող է առնչվել զոհ եւ ոճրագործ խմբերի միջեւ եղած թշնամական, վատ կամ լարված հարաբերություններին[12]։ Տեղահանման հանցագործությունները կարող են ունենալ հատուկ ոչնչացման մտադրություն, կարող են նաեւ լինել չծրագրված գործողությունների[13] եւ հանգամանքների արդյունք[14]։ Տեղահանությունները ուղեկցվում են նաեւ ուղղակի սպանություններով, սակայն մարդկանց խմբերի բնաջնջման հիմնական եղանակն անուղղակի ոչնչացումն է, ինչը ենթադրում է ոճրագործի կողմից թիրախավորված խմբի ներկայացուցիչների կյանքի համար անհամատեղելի պայմանների ստեղծումը։ Տեղահանությունների նպատակն է հասնել ընտրված/

[9] A. Sturgis, The Trail of Tears and Indian Removal, Westport, Connecticut, London, 2006. J. Bowes, The Trail of Tears Removal in The South, New York, 2007, K. Marsico, The Trail of Tears: The Tragedy of the American Indians, Malaysia, 2011.

[10] Sarkin-Hughes, Colonial Genocide and Reparations Claims in the 21st Century: The Socio-Legal Context of Claims under International Law by the Herero against Germany for Genocide in Namibia, 1904–1908, Westport, Connecticut, London, 2008, p. 142. J. Gewald, Herero heroes: a socio-political history of the Herero of Namibia, 1890–1923, Athens, 1999. J. M. Dirk, Empire, Colony, Genocide: Conquest, Occupation and Subaltern Resistance in World History, New York, 2008.

[11] R. Greenberger, նշվ. աշխ.։

[12] A. Basso, նշվ. աշխ., էջ 15։

[13] *1951 թ. ձմռանը Կորեական պատերազմի ընթացքում Հարավային Կորեայի 200,000 զինվորներ իրենց հրամանատարների կողմից քայլերթի են ենթարկվել դեպի Կորեական թերակղզի ռազմական ճամբարներում գործողությունների պատրաստվելու համար, սակայն սննդամթերքի համար նախատեսված միջոցները փոշիացվել էին ռազմական իշխանությունների կողմից, ինչի հետեւանքով 50,000–90,000 զինվորներ սովամահ եղան կամ մահացան հիվանդություններից (*S. Sandler, The Korean War: No Victors, No Vanquished, Great Britain*, 1999, էջ 224։*

[14] A. Basso, նշվ. աշխ., էջ 12։

թիրախային խմբի վերացմանը: Սա տեղի է ունենում կլիմայական պայմանների, սովահարության, ջրազրկման, հիվանդությունների, հյուծվածության հետեւանքով[15]: Անուղղակի ոչնչացումն իբրև սպանության եղանակ ընտրելու հիմնական պատճառն է, որ այն չի ենթադրում մարդկային, նյութատեխնիկական եւ ֆինանսական հսկայածավալ միջոցների կիրառում, ինչն անհրաժեշտ է ուղղակի սպանությունների պարագային:[16]: Պետական ամենաբարձր մակարդակով կարգավորումների եւ որոշումների ընդունումն ուղղակի անհրաժեշտություն է տեղահանության կազմակերպման համար, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

Ա. Տեղահանությունների իրականացումը ենթադրում է գործողությունների բարձր կազմակերպվածություն, որին հնարավոր է հասնել քաղաքական եւ ռազմական իշխանությունների փոխգործակցությամբ,

Բ. Օրենքների ընդունումը նպաստավոր պայմաններ է ստեղծում զոհ, դահիճ եւ չեզոք խմբերի կողմից այս կամ այն չափով տեղահանությանը մասնակից դառնալու կամ այն հանդուրժելու համար,

Գ. Զոհ խմբերի հավանական դիմադրությունը նվազեցնելու եւ տեղահանությունը դյուրին կերպով իրականացնելու համար,

Դ. Ինքնին ապօրինությունը օրինականացնելով օրենքով: Մինչեւ տեղահանության մասին օրենքի ընդունումը փաստված են մասնակի տեղահանությունների դեպքեր: Այդ դեպքերը պատճառաբանվել են մի շարք հանգամանքներով (Նուբար փաշայի կողմից կամավորական զորքերի ֆինանսավորման եւ ապստամբության կազմակերպման մտավախությունը[17], բրիտանական եւ ֆրանսիական ռազմական գործողությունները Կիլիկիայում, Դորթյոլի երկաթուղային կամուրջի պայթեցումը, հայերի ջերմ վերաբերմունքը այդ գործողություններն իրականացնողների հանդեպ[18], զինատար ճանապարհների մոտ գտնվող տարածքի ռազմական կարեւորությունը[19]): Հայերին տեղահանում էին թուրքերով խիտ բնակեցված տարածքներ, որպեսզի վերանան հայկական խիտ բնակատեղիները[20]: Արդեն 1915 թ. մայիսի 27-ին ընդունվեց տեղահանության

[15] A. Basso, *նշվ. աշխ., էջ 10:*

[16] *Անդ:*

[17] D. Bloxham, World Wars and the Unweaving Genocide, the World Wars and the Unweaving of Europe, London, Portland, OR, 2008, *էջ 54:*

[18] D. Bloxham, *նշվ. աշխ., 57:*

[19] *Անդ:*

[20] D. Bloxham, *նշվ. աշխ., էջ 58:*

մասին օրենքը, որը հաճախ հիշատակվում է որպես «Տեղահանության օրենք» կամ ինչպես ընդունված է թուրքական պատմագրության մեջ «Ուղարկելու օրենք» անվանմամբ[21]: Այնուհետեւ՝ մայիսի 30-ին, կառավարության նախարարների խորհրդի կողմից ընդունվեց «Տեղահանության որոշումը»[22]: Որոշման ընդունումը, ըստ Ռուբեն Սաֆրաստյանի, կապված էր 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունների հայտարարագրի հետ, որում խստագույնս դատապարտում էին հայերի զանգվածային կոտորածները եւ ընդգծում, որ դրա պատասխանատվությունն անհատապես ընկնելու է օսմանյան կառավարության անդամների վրա: Ըստ տեղահանության մասին ընդունված օրենքի առաջին հոդվածի՝ ռազմական բարձրաստիճան գործիչները «բնակչության կողմից կառավարության հրամանների, երկրի պաշտպանության ու հանգստի ապահովման հետ կապված գործողությունների եւ միջոցառումների դեմ ընդդիմության, զենքով հարձակման եւ դիմադրության որեւիցե դրսեւորում տեսնելու դեպքում լիազորված ու պարտավոր էին զենքի ուժով անհապաղ խստագույն պատժամիջոցներ կիրառել, եւ հարձակումն ու ընդդիմանալը հիմնովին վերացնել[23]»: Ըստ երկրորդ հոդվածի՝ «բանակների եւ առանձին զորաբանակների ու դիվիզիաների հրամանատարները, ռազմական հատուկ օրենքների վրա հիմնվելով, լրտեսություն կամ դավաճանություն կանխազգալով, կարող են գյուղերի եւ գյուղաքաղաքների բնակչությանն առանձին-առանձին կամ զանգվածաբար այլ բնակատեղիներ ուղարկել ու բնակեցնել»[24]: Տեղահանությունները, այսպիսով, քողարկվում էին «երկրի պաշտպանության, հանգստության եւ ռազմական անվտանգության» առաջնահերթություններով:

Պետք է նշել, որ հայերն իրենց իրավական կարգավիճակով օսմանյան պետության քաղաքացիներ էին, եւ ոճրագործությունները իրականացրել են այն իշխանությունները, որոնք քաղաքացիների անվտանգության երաշխավորը պիտի հանդիսանային ըստ սահմանադրության[25]: Կարեւոր է նշել նաեւ, որ տեղահանման իրականացմանը նպաստեց օսմանյան բանակի շարքերում ծառայող հայերի

[21] Ռ. Սաֆրաստյան, *Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը, Պատմա-բանասիրական հանդես, 2007, թ. 2, էջ 72:*

[22] *Անդ:*

[23] *Անդ, էջ 79:*

[24] *Անդ:*

[25] *Տե՛ս* G. Bozkurt, Review Of The Ottoman Legal System, Journal of The Center for Ottoman Studies Ankara University, Issue: 3, 1992, *էջ 120:*

զինաթափումը: Մինչեւ 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը հայերը զրկված էին զենք կրելու եւ բանակում ծառայելու իրավունքից, սակայն հեղափոխությունից հետո քաղաքացիների հավասարություն հռչակվեց, որով վերանայվեցին այս իրավունքները: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցավ երեք զորակոչ, որոնցից առաջինը տարածվում էր 18–20 իսկ հաջորդ երկուսը՝ 45–60 տարեկանների վրա: Սակայն 1915 թ. փետրվարի 25-ին պատերազմական նախարար էնվեր Փաշայի արձակած թ. 8682 հրամանագրի համաձայն՝ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորները զինաթափվեցին՝ ուղղվելով դեպի աշխատանքային գումարտակներ, որտեղ խումբ-խումբ սպանվեցին: Սեբաստիայում հունիսի առաջին կեսի տեղահանություններին նախորդեցին զանգվածային բանտարկությունները[26]: Հայոց ցեղասպանությանը, մասնավորապես Սեբաստիայի տեղահանությանը եւ դրա համար նախադրյալներ պատրաստելուն մասնակցել են հարյուրավոր ժանդարմներ, չեթեներ[27], չեթեբաշիներ,[28] ոստիկաններ, սպաներ եւ հազարավոր այլ մարդիկ[29]: Սեբաստիայում հիմնական կազմակերպիչներն էին կենտրոնական կառավարությունից 3-րդ զորաբանակի հրամանատար Քյամիլ փաշան (հետագայում՝ էնվերի խորհրդական), Սեբաստիայի նահանգապետ Մուամմերը, «Իթթիհատ» հիմնադիր անդամ, «Թեշքիլաթ-ը մահսուսեի» ղեկավարներից Բեհահեդդին Շաքիր բեյը, դոկտոր Ֆազըլ բեյը[30], 10-րդ «գոլ օրտու»-ի (պահեստային զորամաս) մնայուն փոխանորդ (տայիմի վեքիլ), հազարապետ, հետագայում փաշա, Փերթեւ բեյը, երեսփոխան Բասիմ Մյութեւելլի-զադե, բեյը[31], «Իթթիհատի» քարտուղար Աբդուլ Ղանի պեյը[32], նրա փոխանորդ Մուսթաֆա Խոճա Թուրխալցին, ժանդարմերիայի հրամանատար գնդապետ Ալի Շեֆիգ բեյը, պատերազմական Ատյանի նախագահ Մուսթաֆա Սաբրին եւ գնդապետ Ալի բեյը, ոստիկանապետ Րիֆաաթ բեյը[33] եւ ուրիշներ[34]: Գլխավոր ոճրագործների

[26] Հ. Գ. Ղազարեան, *Յեղասպան թուրքը*, Պէյրութ, 1968, էջ 93:

[27] *Չեթե – հրոսակ:*

[28] *Չեթէ բաշի – հրոսակապետ:*

[29] Հ. Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 107:

[30] Կ. Գաբիկեան, *Եղեռնապատում. Փոքրուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ*, Պոսթըն, 1924:

[31] *Անդ:*

[32] *Անդ:*

[33] Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 591:

[34] Հ. Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 108:

այս ցուցակից արդեն պարզ է, որ գործողությունները կազմակերպվել են պետական եւ կուսակցական միավորների փոխգործակցությամբ, եւ դրանք ապահովելու համար գործել են բանակային, օրենսդիր, գործադիր, կուսակցական, ոստիկանական համակարգերը: Պետական համակարգի եւ ներուժի կիրառման սկզբունքն ընդհանուր է ինչպես Հայոց ցեղասպանության դեպքերի, այնպես եւ այլ տեղահանությունների համար: ԱՄՆ արեւելյան նահանգներից չերոքիների տեղահանումը, նույնպես իրականացվել է բանակային ուժերի կիրառմամբ[35]: Նույն պատկերը կարելի է դիտարկել Գերմանական Հարավարեւմտյան Աֆրիկայում գաղութային իշխանությունների կողմից հերերոների եւ հոտենտոտների նկատմամբ իրականացված տեղահանությունների[36] ընթացքում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Արեւելյան Եւրոպայի տարածքում Գերմանական ռեյխի կողմից հիմնականում հրեաների, ինչպես նաեւ գնչուների, լեհերի, սեւամորթների, պատերազմական գերիների եւ այլ խմբերի հանդեպ իրականացված տեղահանությունները, որոնք Հոլոքոստի վերջին փուլի մասն էին, նույնպես իրագործվում էին բանակային ուժերի միջոցով[37]: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բանակային ուժերի միջոցով իրականացված տեղահանության մեկ այլ օրինակ է Ֆիլիպիններում 1942 թվականին կայսերական Ճապոնիայի կողմից իրականացված ամերիկացի եւ ֆիլիպինցի ռազմագերիների տեղահանությունը[38]:

Տեղահանության վերջնակետերն ընտրվում էին՝ կախված գործողությունների ծրագրերից, հանգամանքներից եւ նպատակահարմարություններից: Դրանք կարող էին լինել երկրի ներքին կամ սահմանային շրջանները. համապատասխան օրինակները կներկայացնենք ստորեւ:

Հայոց ցեղասպանության պարագային որպես վերջնակետ էին ընտրվել երկրի հարավային՝ անապատային հատվածները: Տեղահանության ծրագիրը գործադրության մեջ է դրվել Ներքին գործերի նախարարության գաղտնի հրամանագրով, որի վրա հիմնվելով՝ կազմվել են հայտարարություններ եւ փոխանցվել բնակչությանը՝ շինություններ պատերի վրա փակցվելով, ինչպես նաեւ հաղորդվել են քաղաքային

[35] A. Sturgis, նշվ. աշխ., էջ 57–59:
[36] J. Gewald, նշվ. աշխ., էջ 142:
[37] D. Blatman, նշվ. աշխ., էջ 73–247:
[38] R. Greenberger, նշվ. աշխ.:

ոստիկաններին, իսկ նրանց միջոցով՝ մխթարներին (թաղապետ, գյուղապետ)։ Ըստ հայտարարության՝ տարագրվողները պետք է բարձրագույն հրամանի համաձայն մեկնեին Ջեզիրե եւ Դեր Զոր։ Ճանապարհը պետք է լիներ անվտանգ, իսկ խմբերը՝ հսկողության տակ։ Տեղահանությունը պատճառաբանվում էր պատերազմի հանգամանքով, եթե ցույց տրվեր դիմադրություն, ապա ոստիկաններին կարգադրված էր նման դեպքերը ճնշել ռազմական ուժով։ Թույլատրվում էր վարձել փոխադրամիջոցներ՝ կառք, ձի, էշ, իսկ ով ի վիճակի չէր վարձել, կառավարությունը պարտավորվում էր եզների կառքեր հայթայթել՝ տեղահանվողների գույքը տեղափոխելու համար[39]։ Ըստ Կարապետ Գաբիկյանի՝ հուլիսի 5-ից մինչեւ հուլիսի 18-ը միայն Սեբաստիա քաղաքից տարագրվել է 5400 տուն՝ 37 000 մարդ։ Հունիսի 18-ին նահանգապետ Մուամմերը իր մոտ է կանչել Հայ Առաքելական եւ Կաթոլիկ առաջնորդներին եւ հաղորդել դեպի Միջագետք տեղահանության որոշման մասին։ Հանձնարարել է դրա մասին ծանուցել ժողովրդին։ Տեղահանությանը պատրաստվելու համար տրվել է մի քանի օր ժամանակ, տվյալ դեպքում՝ մինչեւ հուլիսի 5-ը[40]։ Այս հրամանը կատարելու համար տեղահանման ենթակա բնակչությանը տրվել է երեք օր ժամանակ։ Կեմերեկի պարագայում հրամանը հնչեցվում էր մունետիկի միջոցով եւ ներկայացվում որպես «փադիշահի ֆէրման»[41], եւ ժողովրդին պատրաստվելու համար տրվում էր երեք օր[42], ըստ մի այլ վկայության՝ մեկ[43]։ Սամսոնում, ըստ Փայլածու Գաբտանյանի վկայության, հայտարարությունը փակցված էր փողոցում, ըստ որի՝ բնակչությանը տրվում էր 5 օր ժամանակ[44]։ Ըստ մեկ այլ ականատես Կարապետ Ալթունյանի հաղորդած տվյալների՝ Ամասիայում տրվում էր 3 օր՝ գաղթին նախապատրաստվելու համար[45]։ Այս մոտեցումը թերեւս պայմանավորված էր ինչպես տարածքների անբարենպաստ պայմաններով, այնպես եւ ռազմական գործողությունների հանգամանքով՝ ռուսական

---

[39] Հ. Գ. Ղազարեան, նշվ. աշխ., էջ 94։

[40] Կ. Գաբիկեան, նշվ. աշխ., էջ 92։

[41] Սուլթանական հրովարտակ։

[42] Վ. Հովհաննեան, Դեր Զօրից մինչեւ Սիբիր կամ կեանքի ելեւէջներ 1904–1964, Երեւան, 2018, էջ 35։

[43] Ա. Սարգսեան, Ականատեսի հուշատետրից, մեքենագիր, ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 495, Երեւան, 1965, էջ 3–4։

[44] Փ. Գաբտանեան, Յաւակ, Նիւ Եօրք, 1922, էջ 27։

[45] Յ. Ալթունեան, Հօրս՝ Կարապետ Ալթունեանի յուշերը, արձանագրուած՝ ձայներիզներու վրայ, Թորոնթօ, 2013, էջ 44։

ճակատից հեռացնելու համար, նաեւ բացառելով կամ բարդացնելով ռազմական միջամտությունը։

Դեպի երկրի ներքին շրջաններ մարդկանց տեղահանման նմանատիպ օրինակներից է 1838 թ. իրականացված Ջերոքիների քայլերթը, որն իրականացվեց՝ հիմք ընդունելով 1830 թ. «Հնդկացիների տեղահանման մասին ակտը», համաձայն որի՝ պետք է տեղի ունենար Ջերոքիների տեղահանում ԱՄՆ-ի հարավարեւելյան նահանգներից դեպի Միսիսիպի գետից արեւմուտք ընկած՝ չբնակեցված եւ չկազմակերպված ամերիկյան դաշնային տարածքներ։ Բառաանի տեղահանության դեպքում նույնպես ամերիկացի եւ ֆիլիպինցի ռազմագերիներին տարհանում էին դեպի երկրի ներքին շրջաններ՝ ռազմական գործողություններից եւ արտաքին միջամտությունից զերծ պահելու համար։ Հոլոքոստի պարագային տեղահանությունները կատարվում էին դեպի երկրի ներքին շրջաններ՝ ելնելով գաղտնիության ապահովման անհրաժեշտությունից։ Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին շրջանում կատարված տեղահանությունները, երբ Ստալինգրադի ճակատամարտից հետո ակնհայտ էր դառնում խորհրդային զորքերի առաջխաղացումը, ռազմական գործողություններից եւ կռվի ճակատներից հրեաներին եւ այլ զոհ խմբերին հեռու պահելու հարցը դառնում էր թելադրող հանգամանք՝ տեղահանությունները դեպի երկրի խորքեր կազմակերպելու համար։ Սա նաեւ նպատակ ուներ թաքցնելու մինչ այդ կատարված ոճրագործությունները եւ խուսափելու արտաքին ռազմական միջամտությունից։

Տեղահանումը դեպի հատուկ ընտրված տարածքներ նպատակ ուներ նվազեցնել թիրախավորված խմբի հավանական դիմադրությունը։ Զոհ խմբի՝ տեղահանությանն ընդդիմանալու հավանականությունը եւ հնարավորությունը մեծ էին հատկապես քաղաքներում կամ այդ խմբի հարաբերականորեն մեծ խտություն ունեցող բնակավայրերում[46], որտեղ գործում են հանրային կառույցները (ինչպես օրինակ եղավ Վանում)։ Տեղահանության երթուղիներին աքսորյալները անցնում էին մի շարք մեկուսացած/անմարդաբնակ վայրերով, որոնք կազմակերպված թալանի եւ կոտորածների հանգրվաններ էին։ Զոհ խմբի դիմադրությունից խուսափելու կամ հնարավոր դիմադրությունների ճնշումը դյուրացնելու համար այս անցումային կայանները տեղակայվում էին անմատչելի վայրերում. «...Ընտրված էին շատ անբաւարիկ

[46] A. Basso, *նշվ. աշխ., էջ 12։*

տեղեր-անմատչելի լեռնամեջեր, ադամորդու ոտք չի կոխած խորունկ ձորեր, երկրաշարժէ, հրաբուխէ բացուած անյատակ անդունդներ, մթին ալքեր, մեծ գետերու խորխորատներ, գահավեժ ժայռեր, սառնարաններ, ճահճուտներ, լճակներ, մթին անտառներ»[47]: Ծանոթ վայրերից, մարդկանցից եւ սոցիալական կապերից կտրված լինելով՝ զոհերը կորցնում էին ծանոթ միջավայրում կողմնորոշվելու ու գործելու առավելությունները եւ ի վիճակի չէին լինում դիմակայել, խափանել ոճրագործի ծրագրերը կամ հետաձգել դրանք[48]: Զոհ խմբերի դիմադրություն առավել հեշտ էր կոտրել եւ ենթարկեցնել նախապես ընտրված, չբնակեցված, ամայի եւ ոչ բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող տարածքներում, որտեղ բացակայում են կենսագործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները: Այդպիսի տարածքում գրեթե զրոյանում էր զոհ խմբի դիմադրելու հնարավորությունը, քանի որ խմբի անդամները հնարավորություն չէին ունենում հավաքագրելու զենք, զինամթերք, սնունդ, դեղամիջոցներ եւ այլ անհրաժեշտ պարագաներ[49]: Նման անբարենպաստ պայմաններով աչքի ընկնող տարածքները խստորեն նվազեցնում էին փախուստի դիմելով փրկվելու հավանականությունը[50]: Այսպիսի վայրերում իսպառ բացակայում էին կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմանները, իսկ եղած սակավ միջոցներից օգտվելը խստիվ արգելում էին ոճրագործները: Սեբաստիայի տեղահանության ճանապարհին տեղահանվածներին առաջնորդում էին անջրդի, դժվարանցանելի ճանապարհներով, բարձր լեռներով՝ միշտ հեռու պահելով ջրից[51]: Ըստ Գաբիկյանի՝ «կարաւաններէն հարիւրաւոր կիներ, մանուկներ ծարաւահար իներ են, հասարակ ճամփորդութեան ատեն իսկ ճամբորդները ջուրէ կը նեղուին այս դաշտին վրայ»[52]: Իսկ եթե ճանապարհին հանդիպում էին ջրային պաշարներ, ապա դրանք պիտանի չէին խմելու համար. ջրի մոտ լինում էին դիակներ, եւ այն լինում էր նեխած կամ թունավորված[53]: Իսկ եթե

[47] Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 169: Ակունի Սեպուհ, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914–1918), Կ.Պոլիս, 1921, էջ 96:*

[48] D. Feierstein, The Concept of 'Genocidal Social Practices'. In New Directions in Genocide Research, Edited by Adam Jones, Routledge, New York, *2012, էջ 18–36: Մեջբերումն ըստ՝* A. Basso, *նշվ. աշխ., էջ 12:*

[49] *Անդ:*

[50] *Անդ:*

[51] Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 219:*

[52] Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 215:*

[53] Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 219:*

ջուրը մաքուր էր լինում, ժանդարմներն արգելում էին մոտենալ, կամ դարանակալած ոճրագործներն սպասում էին ջրի մերձակայքում եւ մոտենալու պարագայում թալանում, բռնաբարում, սպանում էին ծարավահար աքսորյալներին[54], ինչպես, օրինակ, Սեբաստիայի եւ Մալաթիայի սահմանագլխին տեղի ունեցած մի դեպքի ժամանակ, երբ տեղահանվածները փորձել են մոտենալ ջրի աղբյուրին՝ խմելու եւ ամանները լցնելու համար: Այդ պահին դարանակալ քրդերը հանկարծակի դուրս են եկել թաքստոցներից եւ հարձակվել քարավանի վրա՝ հափշտակելով ամաններ ու պղինձներ[55]: Նմանատիպ օրինակ է նշում Բասոն՝ անդրադառնալով երերոների տեղահանություններին: Դրանց ընթացքում մոտակայքում գտնվող ջրային պաշարները հսկել են գերմանացիները եւ դրանց մոտենալու փորձ կատարողների ուղղությամբ կրակ բացել, իսկ չվերահսկվող աղբյուրները թունավորված են եղել[56]:

Տեղահանության ճանապարհի բնական դժվարություններին ավելանում էին նաեւ դաժան վերաբերմունքը, հալածանքները եւ թալանը: Զրկելով տեղահանվածներին դրամական միջոցներից՝ կտրուկ նվազում էր նրանց վերապրելու հնարավորությունը: Գոյություն ունեին թալանի կազմակերպման մի քանի ձեւեր: Թալանի աչքի ընկնող օրինակ էր մանրակրկիտ մշակված եւ համակարգային բնույթ կրող եղանակը, ըստ որի՝ կազմվում էին «Ապահովագրական հանձնաժողով» անվանումը կրող ոճրագործ խմբեր, որոնք ֆինանսական անվտանգությունը ապահովելու համար, տարբեր հիմնավորումներով (քրդերի թալանից զերծ պահել, ճանապարհի վտանգավոր հատվածները անցնելուց հետո սննդի տեսքով վերադարձնել) թալանում էին տարագրվածներին[57]: Թալանի մեկ այլ օրինակի կարելի է հանդիպել հուշերում սեբաստացի Վահան Հովիվյանի, որ եղել է տեղահանվածների հսկայական մի խմբում: Նա նկարագրում է թալանի հետեւյալ ձեւը. քարավանի հսկիչը իր օգնականների հետ ձիով տեղաշարժվում էր խմբի միջով եւ արժեքավոր իրեր տեսնելով՝

---

[54] *Անդ:*

[55] Կ. Գաբիկեան, *նշվ. աշխ., էջ 162:*

[56] *Տե՛ս* J. Sarkin, Germany's Genocide of the Herero: Kaiser Wilhelm II, His General, His Settlers, His Soldiers. Boydell and Brewer, 2011, *էջ 115:* I. Hull, Absolute Destruction: Military Culture and the Practices of War in Imperial Germany, Ithaca, New York, *2005, էջ 53–54: Մեջբերումն ըստ՝* A. Basso, *նշվ. աշխ., էջ 23:*

[57] *Այդ խմբերից մեկի գործունեության մասին տե՛ս Ռ. Սուքիասյան, Քյոթու Խան. Սեբաստիայի տեղահանության ճանապարհի մի կայանի շուրջ, «Յեղասպանագիտական հանդես», 6 (1), 2018, էջ 44–61:*

բռնագրավում: Սակայն շուտով որդեգրվեց նոր եղանակ, ըստ որի՝ չեթեները ձիերով հասնում էին տարագրյալների խմբի առաջնամաս, գետնին փռում սավան եւ հրամայում, որ յուրաքանչյուր ձիու կառք պետք է վճարի 15 ղուրուշ, իսկ եզան կառք՝ 10: Ով չուներ համապատասխան գումար, պետք է փոխհատուցեր համարժեք իրով, այլապես կսպանվեր: Հեղինակի մայրը գումար չի ունեցել եւ պիտի սպանվեր, սակայն իր համար անհասկանալի պատճառներով փրկվել է: Գործողության ավարտից հետո ձիավորները կրկին վերադառնում էին քարավանի սկիզբ՝ վերսկսելով գործողությունը[58]:

Ամայի տարածքների ընտրությունը պայմանավորված էր նաեւ երրորդ կողմի հավանական միջամտության հնարավորությունը նվազեցնելու եւ բարդացնելու հանգամանքով: Միջամտությունը կարող էր լինել զոհ խմբի անդամների փրկության կամ աջակցության փորձ: Ընտրությունը պայմանավորող հանգամանքներից էր գաղտնիությունը, որն ապահովվում էր վկաների բացակայությամբ: Կանխելով տեղեկատվության արտահոսքերը՝ նվազում էր պատասխանատվության ենթարկվելու հավանականությունը[59]: Տեղեկատվության պակասով պայմանավորված իրադարձություններն անարձագանք են մնացել չեզոք բնակչության, զոհ խմբի մյուս անդամների եւ միջազգային հանրության կողմից: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ տեղահանության կազմակերպիչները ջանքեր են ուղղել չեզոքացնելու օտար ականատեսների ներկայությունը: Սեբաստիայի տեղահանության պարագայում, աչքի ընկնող օրինակ է միսիոներուհի Մերի Գրեֆեմի պարտադրված հեռացումը ճանապարհից եւ նրա վերադարձը Սեբաստիա քաղաք: Մերի Գրեֆեմը 1902 թվականից տնօրինել է Սեբաստիայի աղջկանց վարժարանը[60], հետագայում պայքարել է Կարինում բռնկված ժանտատենդի համաճարակի դեմ[61]: Վերադառնալով Սեբաստիա՝ Մերի Գրեֆեմը դոկտոր Քլարքի հետ փորձել է տեղահանությունից առաջ պահպանել հայերի հարստությունը[62]: Տեսնելով դպրոցի ուսուցիչների եւ աշակերտների բռնագաղթը՝ Գրեֆեմը դիմել է կուսակալ Մուամմերին եւ ստացել նրանց ուղեկցելու եւ

[58] Վ. Հովհաննես, *նշվ. աշխ., էջ 48:*

[59] A. Cooper, The Geography of Genocide, New York, *2009, էջ 70:*

[60] Ե. Քասունի, *Քննական ակնարկ «Միշըների հերըլտ»-ի 1815–1918 թթ. հայ ժողովուրդի ցեղասպանության եւ վերածնունդի մասին արձանագրած վկայագրություններուն, 2012, էջ 208:*

[61] Ե. Քասունի, *նշվ. աշխ., էջ 208–209:*

[62] Ե. Քասունի,, *նշվ. աշխ., էջ 100:*

խնամելու թույլտվություն[63]։ Հաշվի առնելով օտար վկայի ներկայությունը՝ փորձ է արվել տարագրության կազմակերպմանը տալ հնարավորինս քաղաքակիրթ բնույթ։ Մերի Գրեֆեմը, գիտակցելով նշված հանգամանքը, հենց այդ նպատակով էր ուղեկցում քարավանները[64]։ Կաշկանդվածությունից ազատվելու համար մի քանի կայաններ անցնելուց հետո Մալաթիայում թուրք պաշտոնյաները հարկադրել են նրան վերադառնալ Սեբաստիա։ Մերի Գրեֆեմն իր տեսածների մասին տեղեկություններ է հաղորդել Կ.Պոլիս, որոնք իրադարձություններից մի քանի ամիս անց հրապարակվել են «The Missionary Herald»-ում[65]։

Բռնի տեղահանությունների արդյունքում մինչեւ նշանակված վերջնակետ չհասած, ուղղակիորեն եւ վերը նկարագրված եղանակով ոչնչացվում էր տարագրվածների մեծամասնությունը։ Մեջբերենք Կարապետ Գաբիկյանի վիճակագրությունները, որոնցից առաջինը ներկայացնում է իր քարավանի եւ իրեն անձամբ ծանոթ ընտանիքներից վերապրողներին վերաբերող թվերն ըստ հանգրվանների, համաձայն որի՝ Սեբաստիայից դուրս եկած 698 մարդուց Սուրուճ էր հասնում 120-ը (17,2 %), իսկ Հալեպ՝ 76-ը (10,9)[66]։ Հաջորդ մի քանի գյուղերից տարագրված վերապրողների վիճակագրության համաձայն՝ Սեբաստիայի նշված գյուղերից դուրս գալու պահին տարագրվածների թիվը եղել է 36.800, որից Սուրուճ է հասել 157-ը (0,5%), իսկ Հալեպ՝ 13-ը (0,3%)[67]։ Այս թվերը «տեղահանությունը հավասար է կոտորածի» բանաձեւի վառ ապացույց են եւ արտացոլում տեղահանության իրական նպատակները։

Եզրակացություններ

1. Տեղահանությունը կազմակերպելու համար ներգրավվել է ամբողջ պետական համակարգը։

2. Միջոցների միավորումը հնարավոր դարձնելու համար, ինչպես նաեւ զոհ խմբի դիմադրությունը մեղմելու նպատակով ընդունվել է «Տեղահանության օրենքը», որով օրինակացվում է ապօրինությունը։

---

[63] Ե. ՔԱՍՈՒՆԻ, *նշվ. աշխ., էջ 209։*

[64] G. PARTRIDGE, *տեսավկայություն,* http://vhaonline.usc.edu/viewingPage?testimonyID=56557&returnIndex=0# *վեցերորդ րոպե։*

[65] *Տե՛ս* https://babel.hathitrust.org/cgi/pt?id=hvd.ah6eje;view=1up;seq=21, Mary L. Graffam, On the road with exiled Armenians, The Missionary Herald, Thomas Todd Company Printers, Boston, Mass, December 1915, *էջ 565–568, հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս* Ե. ՔԱՍՈՒՆԻ, *նշվ. աշխ. 55–60։*

[66] Կ. ԳԱԲԻԿԵԱՆ, *նշվ. աշխ., նշվ. աշխ., էջ 401–402։*

[67] Կ. ԳԱԲԻԿԵԱՆ, *նշվ. աշխ., էջ 402, Հալեպի թվերը ներկայացված են ավելի մեծ, քան Սուրուճինը, ինչից կարելի է ենթադրել, որ վրիպակ է եւ, թերեւս, պետք լինի հակառակը։*

3. Որպես տեղահանությունների երթուղիներ եւ վերջնակետեր են ընտրվել մահացության աստիճանը բարձրացնող, մարդու առողջությունը խոցելի դարձնող վայրեր։

4. Տեղահանությունը՝ որպես խմբի ոչնչացման եղանակի ընտրությունը պայմանավորված է եղել զանգվածային ոճիրը առանց մեծ ֆինանսա-տեխնիկական ռեսուրսների իրականացնելու նպատակով։ Երթերը ոչ միայն չեն եղել ծախսատար, այլեւ հակառակը. ամբողջ ճանապարհին տարագրվածները ենթարկվել են հարստահարման, թալանի ու բռնության։

5. Որպես երթուղիներ ընտրվել են սակավ կենսապայմաններ ունեցող վայրերը (ջրի պակաս), իսկ առկայության պարագայում խստիվ արգելվել է օգտվել դրանցից, կամ օգտվելու դեպքում տարագրվողները ենթարկվել են տարատեսակ բռնությունների։

6. Տեղահանությունները կազմակերպվել են խոշոր բնակավայրերից հեռու՝ զոհ խմբի հավանական դիմադրությունը բացառելու կամ մեղմացնելու համար։

7. Վերոնշյալ վայրերի ընտրությունը պայմանավորված է նաեւ հնարավոր ականատեսների ներկայությունը կանխելու կամ նման դեպքերի քանակը նվազեցնելու, ինչպես նաեւ նրանց ներգրավումը եւ փրկիչ դառնալու հավանականության բացառման նպատակով։

8. Ըստ մեր ձեռքի տակ եղած վիճակագրությունների՝ տեղահանությունից հետո վերապրողները խիստ սակավաթիվ են, եւ նշված եղանակը Հայոց ցեղասպանության համապատկերում բնաջնջման հիմնական միջոցներից է եղել։

РЕЗЮМЕ

Цель статьи — анализ депортации армянского населения провинции Себастия. Она основана на фактах, рассказов очевидцев, сравнительном анализе теоретических работ, а также на основе проведения параллелей, связанных с депортациями. В статье даны причины переселения, организаторы, методы организации и юридические специфики проводимых процессов. Проведены параллели между депортациями из Себастии и «Дорогой слез» (США, 1938), депортациями гереро и готтентотов (Германская Юго-западная Африка,

1904–1907), Холокостом (Германский Рейх, 1939—1945) и Батаанским «маршем смерти» (Филлипины, 1942). По мнению автора, в организации переселения была вовлечена вся государственная система страны. Депортация как средство уничтожения требует мало ресурсов и служит средством обогащения для преступников

Для путей переселения были характерны плохие условия для жизни и их отдаленность от городов и свидетелей, что помогало предотвратить возможное сопративление и уменьшало шансы найти необходимые для жизни ресурсы. Исследуя доступные материалы, автор утверждает, что переселение в рамках Армянского геноцида является одним из основных методов истребления.

SUMMARY

The article analyzes the deportation of the Armenian population of Sebastia Vilayet. It is based on various materials such as memoirs of survivors, theoretical works, comparative studies of factual materials and parallels with other deportations. The article addresses not only the causes of deportations, but also methods of implementation and the legal aspects of the process. The paper also draws parallels between the deportations of Sebastia and “Trail of tears” (US 1838), the deportation of Herero and the Hotentot (German South-West Africa, 1904–1907), The Holocaust deportation (German Reich, 1939–1945), and Bataan’s “Death marches” (Philippines, 1942). The author has come to the point that the whole state system was involved to organize the deportation. Deportation, as a means of extermination, required little resources, and served as a means of enrichment for the perpetrators. The deportation routes were incompatible with living conditions. They were far from large settlements and witnesses, which reduced the possibility to resist or be rescued. Studying the available statistics, the author expresses conviction that deportations were one of the main means of extermination in the context of the Armenian Genocide.